ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաբերդ համայնք, հեռ.680-10

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<1>> հուլիսի 2019 թվականի N 11

<<ԱՍՍԱԹ>> ՍՊԸ-ԻՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետով,ՀՀ Հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ կետով, Հասատանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 44-րդ կետի ը/ ենթակետով,հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 23.03.2012թ. <<ԱՍՍԱԹ>> ՍՊԸ-ին տրված օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԲ-29/366 թույլտվությունը և 06.06.2012թ. թիվ Լ-366 լեռնահատկացման ակտը և Քարաբերդ համայնքի ավագանու 28 հունիսի 2019 թվականի թիվ 7 որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<ԱՍՍԱԹ>> ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով 5 տարի ժամկետով մինչև 06.06.2024թ., առանց մրցույթի տրամադրել Քարաբերդ համայնքի Չայիքոլի 1 հասցեում գտնվող 19.7119 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 06-108-206-0002 ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը՝ ընդերքօգտագործման նպատակով:
2. Հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 197 119 ՀՀ դրամ՝ 1 հեկտարի տարեկան վարձավճարի չափը 10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ:
3. <<ԱՍՍԱԹ>> ՍՊԸ-ի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որից ծագող իրավունքների պետական գրանցումը իրականացնել <<ԱՍՍԱԹ>> ՍՊԸ-ի միջոցների հաշվին:

Համայնքի ղեկավար Յուրիկ Շավելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաբերդ համայնք,6-80-10.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 15 » հուլիսի 2019 թվականի N 12

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Լոռու մարզպետի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2019թ. հիմնական միջոցառումների պլան»-ի ա/թ հուլիսի 12-ին իմ ղեկավարությամբ Լոռու մարզի Քարաբերդ համայնքում անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների օջախի վերացում» թեմայով:
Ուսումնավարժության կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Նշանակել՝
1.1 Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ աշխատակազմի քարտուղար Գառնիկ Գրիգորյանին:
Շտաբը կազմավորել համայնքի ծառայությունների բազայի վրա:
2. Ուսումնավարժությունում ընդգրկել համայնքային կապի և ազդարարման, տրանսպորտային, ինժեներական, բույսերի և կենդանիների պաշտպանության, բժշկական, հասարակական կարգի պահպանման ծառայություններին:
3.Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին.
- մշակել և մինչև հունիսի 28-ը իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերը և ապահովել պլանով նշված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը.
-ուսումնասիրել և ճշգրտել « ԱԻ առաջացման դեպքում ստեղծվող իրավիճակի և դրա սպառնալիքի դեպքում կամ հետևանքների վերացման ժամանակ գործողությունների պլանը» և դրանց իրականացման մեխանիզմը.
-համայնքային ծառայությունների ու կազմավորումների պատասխանատուների հետ անցկացնել տեսական պարապմունքներ,շտաբային վարժանքներ.
-նախապատրաստել ղեկավարման կետը.
-իրականացնել բնակչության ուսուցում՝ գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների առաջացման դեպքում վարվելակերպի կանոնների մասին.
-ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին ինձ զեկուցել մինչև հուլիսի 04-ը:
4.Համայնքային ծառայությունների պատասխանատուներին .
1)ուսումնասիրել և ճշգրտել ծառայությունների կանոնադրություններն ու խնդիրները:
2)կապի և ազդարարման պատասխանատու Սոնա Գուրգենյանին՝ապահովել կայուն և անխափան կապ ծառայությունների և կազմավորումների հետ:
3)տրանսպորտային ծառայության պատասխանատու Յուրիկ Շավելյանին՝պատրաստ վիճակի բերել առկա տրանսպորտային միջոցները՝ անկված խոզերին տեղափոխելու նպատակով.
4)ինժեներական ծառայության պատասխանատու Արփինե Հարությունյանին՝պատրաստ վիճակի բերել առկա ինժեներական միջոցները, անկված խոզերին թաղելու նպատակով.
5)բժշկական ծառայության պատասխանատու Մեդա Գրիգորյանին՝ճշգրտել ծառայության խնդիրներն ու դրանց լուծման կարգը գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեպքում.
6)բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պատասխանատու Արայիկ Ալոյանին՝ճշգրտել ծառայության խնդիրները՝գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեպքում.
7)հասարակական կարգի պահպանման ծառայության պատասխանատու ոստիկանության կապիտան Աշոտ Դավթյանին՝ գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեպքում ճշտել ծառայության խնդիրները,պատրաստ վիճակի բերել ծառայության միջոցները:
5.Ուսումնավարժության ղեկավարումն իրականացվելու է համայնքի կառավարման կետից:
6. Ուսումնավարժության անցկացման հսկողությունը թողնում եմ ինձ վրա:

Համայնքի ղեկավար՝ Յուրիկ Շավելյան

15 հուլիսի 2019թ.
Գ. Քարաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաբերդ համայնք,6-80-10.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 15 » հուլիսի 2019 թվականի N 13

ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության << Բյուջետային համակարգի մասին.>> օրենքի 33-րդ հոդվածով:

Որոշում եմ

Ի գիտություն ընդունել Քարաբերդ համայնքի 2019թ. տարեկան բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային համամասնությունները:

Համայնքի ղեկավար՝ Յու. Շավելյան

15 հուլիսի 2019թ.
գ. Քարաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաբերդ համայնք,6-80-10.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 06 » օգոստոսի 2019 թվականի N 14

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. թիվ 2387 որոշումը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Քարաբերդ համայնքի վարչական տարածքում 06-102-022-008 ծածկագրի տակ գտնվող 0.2 հա բնակելի տուն-տնամերձ հողամասին տրամադրել փոստային հասցե 1 փողոց 10-րդ փակուղի տուն 5:

Համայնքի ղեկավար՝ Յուրիկ. Շավելյան

06 օգոստոսի 2019թ.
գ. Քարաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաբերդ համայնք,6-80-10.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 06 » օգոստոսի 2019 թվականի N 15

ԱՆՈՒՆԻ ՈՒՂՂՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով քաղաքացի Շուրա Արամի Գևորգյանի դիմումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության « Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Առաջին պետական գրանցման ժամանակ Քարաբերդի համայնքապետի կողմից տրված քաղվածքում տեղի է ունեցել անունի սխալ՝ Շուրիկ Արամի Գևորգյանի (ծնված 13.05.1941թ.) փոխարեն պետք է լինի Շուրա Արամի Գևորգյան (նույնականացման քարտ N 007721046 018, ծնված 13.05.1941թ.) :

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ՝

2. Շուրիկ Արամի Գևորգյանը (ծնված 13.05.1941թ.) նույն ինքը Շուրա Արամի Գևորգյանն է (նույնականացման քարտ N 007721046 018, ծնված 13.05.1941թ.):
3. Դիմել ՀՀԿԱԱԳԿՊԿ-ի Վանաձորի տարածքային ստորաբաժանում՝ սեփականության իրավունքի վկայականներում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

Համայնքի ղեկավար՝ Յուրիկ. Շավելյան

06 օգոստոսի 2019թ.
գ. Քարաբերդ